ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Մովսես Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   «Հայկական Ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ-ՀԱԷԿ-ի տնօրեն

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Մոսկվա, օգոստոսի 26-ից օգոստոսի 30-ը ներառյալ, 2024թ.

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն «ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացում» նախագծի աշխատանքային խմբի հանդիպումներին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Աշխատանքային խմբի հանդիպմանը մասնակցում էին հայկական կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ և ՀՀ ՄԱԿԿ ներկայացուցիչները, ռուսական կողմից «Ռոսատոմ Սերվիս» բաժնետիրական ընկերության ազդեցության տիրույթում գտնվող տարբեր գիտահետազոտական ինստիտուտների՝ «Ատոմէներգոպրոյեկտ» ԲԸ, «Ատոմէներգոռեմոնտ» ԲԸ, «ՑԿԲՄ» ԲԸ, «Հիդրոպրեսս» ՕԿԲ ԲԸ, «Կուրչատովսկիյ Ինստիտուտ» ԲԸ ԳՀԿ, ՑՆԻԻԿՄ «Պրոմեթեյ» ընկերությունների ներկայացուցիչները: Հանդիպումների ընթացքում քննարկվել են ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման նպատակով կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված աշխատանքների վերաբերյալ որոշ խնդրահարույց հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   27.08.2024 թվականին ՀՀ ՄԱԿԿ, «Ռոսատոմ Սերվիս» և «Հիդրոպրեսս» ՕԿԲ բաժնետիրական ընկերությունների ներկայացուցիչների հետ քննարկվեցին ընթացիկ փոխդասավորության պայմաններում և ցանկացած կետում DN-200 «նոր» հոսաթողման պայմաններում ռեակտորային կայանքի հաշվարկային հիմնավորման աշխատանքների ծավալին և հաշվետու փաստաթղթերի կազմին ներկայացվող պահանջները, ինչպես նաև ռեակտորային կայանքի հաշվարկային հիմնավորման աշխատանքների իրականացման նախնական ժամանակացույցը:

28.08.2024 թվականին ՀՀ ՄԱԿԿ, «Ռոսատոմ Սերվիս» և «Կուրչատովսկիյ Ինստիտուտ» ԳՀԿ բաժնետիրական ընկերությունների ներկայացուցիչների հետ քննարկվել է նմուշ-վկաների կիրառմամբ ռեակտորային կայանքի մետաղի ստուգման ծրագրի հետագա իրականացման տեխնիկական առաջադրանքը:
Նույն օրը հանդիպում է կազմակերպվել նաև ՀՀ ՄԱԿԿ, «Ռոսատոմ Սերվիս», «Ատոմէներգոռեմոնտ» և «Հիդրոպրեսս» ՕԿԲ բաժնետիրական ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ ՀԱԷԿ-ի սարքավորումների տարրերի դասակարգչին ներկայացվող պահանջների և գլխավոր շրջանառու պոմպի յուղահամակարգի արդիականացման աշխատանքների նախնական պլանի քննարկման վերաբերյալ:
29.08.2024 թվականին ՀՀ ՄԱԿԿ, «Ռոսատոմ Սերվիս» և «Ատոմէներգոռեմոնտ» բաժնետիրական ընկերությունների ներկայացուցիչների հետ քննարկվել է ՀԱԷԿ-ի պատասխանատու սպառիչների հովացման համակարգի 2025թ. արդիականացման աշխատանքների գրաֆիկը:
Նույն օրը տեսակապի միջոցով կազմակերպվել է «Ռոսատոմ Սերվիս», «ՑԿԲՄ», ՑՆԻԻԿՄ «Պրոմեթեյ», «Կուրչատովսկիյ Ինստիտուտ» ԲԸ ԳՀԿ ընկերությունների ներկայացուցիչների հետ քննարկում՝ ՀԱԷԿ-ի գլխավոր շրջանառու պոմպ-317 շահագործման ժամկետի երկարացման և ռեակտորային կայանքի սարքավորումների կանխատեսային մեխանիկական բնութագրերի որոշման հարցերի հետ կապված:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Քննարկումներն ու բանակցություններն «Ռոսատոմ Սերվիս» «Ատոմէներգոպրոյեկտ» ԲԸ, «Ատոմէներգոռեմոնտ» ԲԸ, ՕԿԲ ԲԸ «Հիդրոպրեսս», «Կուրչատովսկիյ Ինստիտուտ» ԲԸ ԳՀԿ, ՑՆԻԻԿՄ «Պրոմեթեյ» ընկերությունների ներկայացուցիչների հետ ընթացել են բարենպաստ աշխատանքային մթնոլորտում, ձեռք են բերվել պայմանավորվածություններ տարբեր միջոցառումների անցկացման ժամանակացույցերի վերաբերյալ, տրվել են լուծումներ և ընդունվել են համատեղ որոշումներ այդ միջոցառումների կատարման համար:

ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման աշխատանքները առայժմ ընթանում են առանց խոչընդոտների, բացառությամբ գլխավոր շրջանառու պոմպի մնացորդային պահուստի հիմնավորման աշխատանքների: Նախորդ տարի 2023թ. ՊՆՎ-ից հետո ՀԱԷԿ-ի կանգառներից երկուսը կապված էին գլխավոր շրջանառու պոմպերի/այսուհետև ԳՇՊ/ քփացման համակարգերի հետ, որոնց կոնստրուկտիվ թերությունները վերացնելու համար ՀԱԷԿ-ը պատրաստվում է արդիականացնել ԳՇՊ-ների քփացման համակարգերը՝ եվրոպական կայանների շուրջ 10 տարուց ավել արդեն փորձված տարբերակով, որը տարբերվում է ռուսական «ՑԿԲՄ» ԲԸ-ի առաջարկից, որը մոտ 2 անգամ թանկ է եվրոպական առաջարկից և կատարման ժամանակացույցը ընդունելի չէ մեր համար: Հիմնականում այդ պատճառով «ՑԿԲՄ» ԲԸ ընկերության ներկայացուցիչները պատճառաբանեցին, որ չեն կարող հիմնավորել գլխավոր շրջանառու պոմպի մնացորդային պահուստը, որոնց շուրջ ռուսական «Ռոսատոմ Սերվիս» և «ՑԿԲՄ» ԲԸ ընկերությունների հետ բանակցությունները դեռ կշարունակվեն:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հանդիպումների և քննարկումների արդյունքում կազմվել են համապատասխան արձանագրություններ, որոնք ռուսական կողմից հաստատված ներկայացվել են «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին: Արձանագրությունները այս պահին քննարկման փուլում են ՀԱԷԿ-ի և ՀՀ ՄԱԿԿ-ի կողմից հաստատելու նպատակով:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի
առաջին տեղակալ- ՀԱԷԿ-ի տնօրեն

Մ. Վարդանյան